

**Հ Ր Ա Մ Ա Ն N 103-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

**«15» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ.**

**ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

**ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 01/13/2/4608-14 գրությունը և Գևորգ Հարությունյանի դիմումը.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի գործերի կառավարչի (ծածկագիր՝ 14-2.1-20) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Գևորգ Վլադիմիրի Հարությունյանի հետ 2014 թվականի դեկտեմբերի 15-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**